ԵՐԵՎԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փողոց. 108/4
Հեռախոս՝ (+37410) 650971, 650961
Ֆաքս՝ (+37410) 653809
Էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 650971, 650961
Fax: (+37410) 653809
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 650971, 650961
Факс: (+37410) 653809
Эл.почта: norkmarashmc@gmail.com

«16» փետրվարի 2026թ.

ՀՐԱՄԱՆ N ԳՆ-173-Ա
<< ԼԱՆԴՐԻ ՍՍՍ >> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին **ներառել** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի ծածկագիրը	Պայմանագրի					Պայմանագրի կողմի /մատակարար/			Պատվիրատուի անվանումը	Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հրապարակելու ամսաթիվը	Իրավական հիմքը	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
	ծածկագիրը	Չափաբաժնի համարը	անվանումը	Չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/	Չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/	անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն				
ՆՄԲԿ-ԷԱՃԾՁԲ-26/4	ՆՄԲԿ-ԷԱՃԾՁԲ-26/4-1	1	Լվացքի ծառայություններ	12650000	10725000	<<Լանդրի ՍՍՍ>> ՍՊԸ	08309361	ք. Երևան, Խաչատրյան փող. 13շ. 39բն	«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ	04.02.2026թ.	Վաճառողը հրաժարվել է Պայմանագիրը կատարելուց	Ներկայացվում է ստորև

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և <<Լանդրի ՍՍՍ>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 03.12.2025 թվականին կնքվել է ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/4-1 գնման պայմանագիրը(այսուհետև՝ նաև Պայմանագիր):

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ:

Պայմանագրի շրջանակներում ծառայությունների մատուցման համար ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու մասին համաձայնագիր կնքելու ծանուցումը Ընկերությանը ներկայացվել է 19.01.2026 թվականին և համաձայն կարգի, Ընկերության կողմից համաձայնագիրը կնքելու վերջնաժամկետը հանդիսանում է 04.02.2026 թվականը:

Ընկերությունը 03.02.2026 թվականին դիմել է Պատվիրատուին, տեղեկացնելով, որ հրաժարվում է Պայմանագրի հետագա կատարումից, ընդ որում Ընկերությունը համաձայնագիր չի կնքել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը հրաժարվել է պայմանագիրը կատարելուց, <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն որոշել է միակողմանի հրաժարվել Պայմանագրից, համարելով այն միակողմանի լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը (1150001612200100 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

16.02.2027 թվականի դրությամբ Ընկերությունը որակավորման և պայմանագրի ապահովումները չի վճարել Պատվիրատուին:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ